



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

**ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 816**

**Վիճակիս Հոգևոր Հովիւներուն եւ Եկեղեցականներուն,**

Մեր շրջաբերականով տեղեկացուցած էինք որ Ամենայն Հայոց Գործնադիր Կաթողիկոս Նորին Ս. Օծուրծին Տ. Տ. Գարեգին Առաջին մեր թեմին իր անդրանիկ այցելութիւնը պիտի տայ 1996 Յունուար ամսուան ընթացքին:

Այս առթիւ կազմուած են կեդրոնական եւ շրջանային յանձնախումբեր՝ Վեհափառ Հայրապետի այցելութեան կապակցութեամբ անհրաժեշտ կարգադրութիւնները ընելու համար:

Նորին Սրբութիւնը Նիւ Եորք կը ժամանէ Չորեքշաբթի Յունուար 10, յետ միջօրէին: Օդանաւակայանի մէջ Վեհափառ Հայրապետը դիմաւորելէ ետք՝ երեկոյեան ժամը 7.00—ին Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ տեղի պիտի ունենայ Հրաշափառի արարողութիւն, որուն ընթացքին բարի գալուստ պիտի մաղթուի Նորին Սրբութեան:

Հինգշաբթի Յունուար 11, առաւօտեան ժամը 9—ին Առաջնորդարանիս մէջ նախաճաշ—խորհրդակցական հանդիպումի մը ընթացքին՝ մեր թեմի եկեղեցականները առիթը պիտի ունենան մօտ երկու ժամ ըլլալու Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետ:

Այս գրութեամբ կը հրաւիրենք մեր թեմի բոլոր հոգեւորականները՝ որպէս զի մաս կազմեն Նիւ Եորքի օդանաւակայանի մէջ Նորին Սրբութիւնը դիմաւորող շքախումբին, եւ մասնակցին Հրաշափառի արարողութեան ու խորհրդակցական հանդիպումին:

Առաջնորդարանը անհրաժեշտ կարգադրութիւնները ըրած է եկեղեցականներու գիշերելու յարմարութեանց կապակցութեամբ:

Բարի եղէք առաջին առիթով ձեր մասնակցութեան մասին տեղեկացնել Ս. Վարդան Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Արժշ. Տ. Մարտիրոս Բհնյ. Չեւեանի, շեշտելով նաեւ որ գիշերելու յարմարութեան կարիքը պիտի ունենա՞ք:

Ուրախ պիտի ըլլանք եթէ մեր բոլոր եկեղեցականները ներկայ գտնուին վերոյիշեալ ձեռնարկներուն:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐԲ. ՊԱՐՄԱՄԵԱՆ  
Առաջնորդ



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

**ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 817**

Նիւ Եորքի, Նիւ Ճորձիի, Ֆիլատելֆիոյ եւ Գընէթիքթի (Թրամպըլ)  
Հոգեւոր Հովիւներուն,

Ինչպէս նախապէս տեղեկացուցած էինք ձեզի, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջին՝ 1996 Յունուար 10-ին պիտի ժամանէ Միացեալ նահանգներ:

Նորին Սրբութիւնը, Կիրակի Յունուար 14-ին, Հայրապետական Ս. Պատարագ պիտի մատուցանէ Նիւ Եորքի Եպիսկոպոսական Սէյնթ Ման Տիը Տիվայն Մայր Տաճարին մէջ՝ յետ միջօրէի ժամը 2.00-ին:

Այս գրութեամբ կը հրահանգենք որ նոյն օրը, Կիրակի Յունուար 14, ձեր եկեղեցիներուն մէջ Ս. Պատարագ չմատուցուի (եթէ անհրաժեշտ նկատուի՝ կարելի է Առաւօտեան Ժամերգութիւնը կատարել), եւ նախապէս այս մասին տեղեկացուի հաւատացեալներուն, եւ թելադրուի ու քաջալերուի որպէս զի անոնք անպայման ներկայ գտնուին Հայրապետական Ս. Պատարագին:

Զայս կը հաղորդենք առ ի գործադրութիւն:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐԲ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ

Դեկտեմբեր 19, 1995  
Նիւ Եորք, Ն.Ե.